ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Քրիստիննե Գրիգորյանի և ՀՀ արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության հարցերով խորհրդական Ամալյա Հովսեփյանի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Վաշինգտոն) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձիք՝ Քրիստիննե Գրիգորյան և Ամալյա Հովսեփյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնները՝ ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ և ՀՀ արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության հարցերով խորհրդական:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Վաշինգտոն), 2021թ. հունիսի 6-ից 11-ը:

Հրավիրող կողմը՝ Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանություն:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի, ԱՄՆ պետքարտուղարության Եվրոպայի բյուրոյի, Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի, Ժողովրդավարության, իրավունքների, աշխատանքի բյուրոյի, ԱՄՆ ՄԶԳ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումներին:

Քննարկված թեմաները՝ Հայ-ամերիկյան ռազմավարական երկխոսության տրամաբանությամբ ամերիկյան գործընկերների հետ ՀՀ-ում ժողովրդավարական բարեփոխումների ընթացքին, առկա մարտահրավերներին, ինչպես նաև արդարադատության ոլորտում ծավալած համագործակցության շրջանակն ընդլայնելուն առնչվող և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի, ԱՄՆ պետքարտուղարության Եվրոպայի բյուրոյի, Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի, Ժողովրդավարության, իրավունքների և աշխատանքի բյուրոյի, ԱՄՆ ՄԶԳ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումներին մասնակցելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Քրիստիննե Գրիգորյանը և ՀՀ արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության հարցերով խորհրդական Ամալյա Հովսեփյանը 2021թ. հունիսի 6-ից 11-ը գտնվել են Ամերիկայի Միացյալ Նահանգներում (Վաշինգտոն):

Այցի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Քրիստիննե Գրիգորյանը հեռավար հանդիպում է ունեցել Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահ Ջեքի Սփիրի, հանձնախմբի նախագահի տեղակալ Ադամ Շիֆի, Կոնգրեսի հայկական հարցերով խմբի անդամների աշխատակազմի ավագ խորհրդականների հետ: Օրենսդիր մարմնի ներկայացուցիչները հետաքրքվել են ժողովրդավարական բարեփոխումների ընթացքով և արձանագրված արդյունքներով:

Ամերիկայի Միացյալ Նահանգներ այցի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Քրիստիննե Գրիգորյանը հանդիպումներ է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի Արևելյան Եվրոպայի և Կովկասի հարցերով փոխտեղակալ Ջորջ Քենթի, պաշտպանության քարտուղարի Ռուսաստանի, Ուկրաինայի և Եվրասիայի հարցերով փոխտեղակալ Լորա Կուպերի, պետքարտուղարի Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի հարցերով փոխտեղակալ Կարա ՄըքԴոնալդի և նրա Եվրոպայի հարցերով տեղակալ Վենդի Սիլվերմանի հետ:

Հանդիպումների ընթացքում ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալը ամերիկյան գործընկերներին է ներկայացրել արդարադատության ոլորտի բարեփոխումների ընթացքը, դրանց այս փուլի արդյունքները, կոռուպցիայի

դեմ պայքարի ժողովրդավարական ինստիտուտների ստեղծման հաջողությունները, ոստիկանության ոլորտի բարեփոխումների հիմնական ուղղություններն ու առաջիկա պլանները: Զրուցակիցներն անդրադարձել են թե՛ հաջորդիվ գործողություններին և թե՛ բարեփոխումների ընթացքի մարտահրավերներին: ԱՄՆ գործընկերները բարձր են գնահատել 2020 թվականի համավարակի, ապա պատերազմի դժվարությունների պայմաններում բարեփոխումների ընթացքի շարունակությունն ապահովելու կառավարության ջանքերը, ինչպես նաև արդեն իսկ արձանագրված արդյունքները:

Ամերիկյան գործընկերները հանդիպումների ընթացքում շեշտել են, որ տարածաշրջանում այլ պետությունների կողմից բարեփոխումների իրականացման ընթացքը մինչ այս արդեն իսկ վերհանել է կոռուպցիայի դեմ ինստիտուցիոնալ պայքարի համար ընդհանրական մարտահրավերներ, սակայն Հայաստանի դեպքում արձանագրել են քաղաքական ուժեղ կամքի առկայությունը ժողովրդավարական, կարող հաստատություններ ձևավորելու առումով:

Պետքարտուղարության ներկայացուցիչները նշել են նաև, որ ԱՄՆ նախագահի վարչակազմը կոռուպցիան դիտում է որպես ազգային անվտանգության սպառնալիք, և իրենք համակրանքով են հետևում Հայաստանի կառավարության կողմից այդ ոլորտում իրականացվող քայլերին, որոնք կրում են ինստիտուցիոնալ և հիմնարար բնույթ:

Վաշինգտոնում Քրիստիննե Գրիգորյանն աշխատանքային քննարկումներ է ունեցել Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության միջազգային բյուրոյի (INL) տնօրենի փոխտեղակալ Քեյթ Սցպիլայի հետ: Վերջինիս հետ Քննարկումների առանցքում եղել են ոստիկանության ոլորտի բարեփոխումներին, ներառյալ՝ նոր պարեկային ծառայության, Ներքին գործերի նախարարության ձևավորման աջակցության, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի ինստիտուցիոնալ կայացմանն աջակցության հարցերը: Զրուցակիցները վերահաստատել են այս ուղղություններով ԱՄՆ կառավարության կողմից 2020

թվականին ներդրված աջակցությունը շարունակելու և ըստ կարիքների ընդլայնելու վերաբերյալ իրենց պատրաստակամությունը:

ԱՄՆ կատարած այցի ընթացքում Քրիստիննե Գրիգորյանը հանդիպել է նաև ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Եվրոպայի և Եվրասիայի հարցերով փոխտնօրեն Մարգոթ Էլիսի և նրա տեղակալ Ալեքսանդր Սոկոլովսկու հետ:

Հանդիպման ընթացքում ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալը նախ շնորհակալություն է հայտնել ԱՄՆ ՄԶԳ գործընկերներին ավանդական բարձր մակարդակի համագործակցության համար: Ի թիվս բազմաթիվ հաջողված ծրագրերի առաջին տեղակալ Գրիգորյանը մատնանշել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորման նախնական փուլում տրամադրված աջակցության, ինչպես նաև Արդարադատության նախարարության Օրենսդրական կենտրոնի աջակցության ծրագրերը, որը պետական կառավարման համակարգում ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորման ու տարածման լավ օրինակ է: ԱՄՆ ՄԶԳ գործընկերները ներկայացրել են դատաիրավական և հակակոռուպցիոն ոլորտի բարեփոխումներին աջակցության մի քանի միլիոն դոլարանոց երկու մեծ ծրագրերի մեկնարկի մանրամասները:

Վաշինգտոնում ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Քրիստիննե Գրիգորյանը հանդիպել է նաև «Քրեական հետաքննությունների վերապատրաստման աջակցության միջազգային կենտրոնի» (ICITAP) տնօրեն Գրեգ Դուկատի և նրա թիմի հետ:

ՀՀ արդարադատության նախարարի
առաջին տեղակալ

Recoverable Signature

X

Kristinne Grigoryan

Signed by: GRIGORYAN KRISTINNE 7708810450

Քրիստիննե Գրիգորյան

15.06.2021թ.